հուրդը։ Սակայն՝ այդ երկու հաստատութիւնն էլ երևան չհանեցին իրենց վրայ վերցրած ժեծ և պատասխանելու գործը վարելու համար նոյն իսկ նուազագոյն ընդունակութիւններ։ Նրանք չկարողացան օգտուել նոյնիսկ այն ցուցմունքներից, որ գաղթականութեան փրկութեան համար անում էին և անում են նրանց՝ Մալկայից և Բակուրիանիից եկող ժողովրդական ներկայացուցիչները և Ջաւախքի տարբեր բնակչութեան կարիքներին մօտ կանգնած վարչութիւնս։ Այսպէս թէ այնպէս՝ մինչև այժմ համարեա ոչինչ չի խանգարել մեր հայրենակիցների բնաջնջման... Միայն այժմ աշխատում են Մալկայի և Բակուրիանիի լեռների վրայ դեգերող գաղթականութիւնը ձիւների միջից հանել և մինչև վերագարձը տեղաւորել Մանգլիսի, Իէլի-Կլիւչի և Բորժոմի դատարկ շէնքերում։ Հիմք չկայ պնդելու, որ նոյն իսկ այդ փոքր և շատ ուշացած գործը գլուխ կը գայ փախստականութեան վտանգաւոր դրութեամբ պահանջող փութկոտութեամբ։

Ախալքալաքի Հայրենակցութեան Վարչութիւնը դիմում է կառավարութեանը հետևեալ երկու խնդրով։

Ա) Վրաց կառավարութեան հետ միասին գործ դնել ամեն մի ջանք, որ ժողովուրդը պատի, կհանքի և գոյքի ապահովութեան երաշխիքներով մօտ օրերս հայրենիք վերադառնայ։

Բ) Գաղթականական մարմինները փախստականներին այնպիսի օգնութիւն են ցոյց տալիս, որ քիչ կարող է ձգձգել, բայց ոչ կանխել փախստականութեան բնաջնջումը։ Ախալքալաքի փախստականները և նրանց 100,000-ից աւելի ունեցած խոշոր անասունների չնչին, նոյնիսկ մի տասներորդը չկազմող մնացորդը ամբողջապէս համարեա հիւանդ են և կարիք ունին համապատասխան խնամքի։ Գաղթականական մարմինները բնակչութեան շատ աննշան մասին օրական տալիս են մարդագլուխ մի 1/4 մինչև կէս գրանքայ հաց, իսկ անասունների մասին մինչև օրս նոյ՝ իսկ մատաղ չի եղել։ Վարչութիւնս խնդրում է մարդկանց հացաբաժնի նորման հասցնել օրական առնուազը մէկ և կէս գրանքայի, պէտք է ուժեղացրած աննգով առողջացնել մարդկանց։ Վարչութիւնս անհրաժեշտ է համարում նոյնպէս անասունների մնացորդի փրկութիւնը, ուստի խնդրում է թոյլ տալ գաղթականական մարմիններին արձակել իւրաքանչիւր խոշոր անասունի համար օրական ամենաքիչը 10 գրանքայ յարդ կամ խոտ։

Ախալքալաքի Հայրենակցութեան Վարչութիւնը գիտակցում է, որ նա կառավարութեանը դիմում է շատ դժուար իրագործելի խնդրով, բայց այս խնդրի կատարումը անհրաժեշտ է ժողովրդի մնացորդի և նրան հայրենիքի հետ կապող արդէն փոքրաքիւ անասունների փրկութեան համար։

Վարչութիւնս յոյս է տածում, որ մի երկու օրում այս հարցերի վերաբերմամբ որոշումներ կը կայացուին, և այդ մասին հեռագրով կը յայտնուի Վիրահայ Ազգ. Խորհրդին։

Վարչութիւնս խնդրեց պ. պ. Ա. Խաչիսեանին և Մ. Պապաջանեանին կարիք զգացելու դէպքում աւելի մանրամասն հիմնաւորել Վարչութեանս այս դիմումը։

Նախագահ՝ Օհանջանեան
Քարտուղար՝ Պ. Աբելեան
Բակուրիանաբնակ հայ գաղթականութեան ներկայացուցիչ Ղոչարէկ գիւղի բնակիչ՝ Աւ. Ղարալեանց
Իսկականի համեմատ է։
Քարտուղար՝ Պ. Աբելեան

✓ ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Հայաստանի գործերի հաւատարմատար Ա. Ջամալեանը դիմել է Վրաստանի արտաքին գործերի նախարարին՝ խնդրելով կարգադրել, որ Վրաստան եկող 250 հայ ուղևորներին՝ որոնք արգելուած են Մանանհում, թոյլ տրի Վրաստան գալ, նկատի ունենալով, որ նրանք իրենց տեղերից մեկնել են նախ քան երթևեկութեան մասին եղած վրաց կառավարութեան կարգադրութիւնը։ Արտաքին գործերի նախարարը յարգելով Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի խնդիրը, ուղարկել է զինուորական նախարարին համապատասխան կարգադրութեան համար։

✦ Վիրահայ Ազգ. Խորհրդի գաղթ. մարմնի ստացած տեղեկութիւնների համաձայն, ներկայումս Վլադիկաւկազում կան 6000 փախստական հայեր, Մոզդոկում՝ 600, իսկ մինչև այժմ Վլադիկաւկազի վրայով զանազան շրջաններն են մեկնել 42,000 գաղթ., որոնցից 1,000 հոգի մեռել են։ Գաղթականները գտնուում են ծանր կացութեան մէջ. բոլշևիկ իշխանութիւնը դադարեցրել է նրանց նպաստ տալը և ուժով հարկադրում է, որ նրանք հեռանան Վլադիկաւկազից։ Գաղթականների հետ այսպէս են վարուել Նազարլիթեանի ներքին գործերի ղեկավարութիւնն ստանձնելուց յետոյ։ Սկզբում ամերիկեան կարմիր խաչի ընկերութիւն ցոյց տալիս եղել, բայց այժմ դադարեցրել է։ Նկատի

յաստան ներմուծելիք ալիւրի առաջին բաժին հարիւր հազար փութից ոչինչ չվերցնել։

✦ Քաղաքագլուխ Էլիաւան կարգադրել է քաղաքային վարչութեան և դումայի դիւաններին, որ նախարարութեանց հետ ունեցած գրագրութիւնները և կառավ. ուղարկելիք գրութիւնները լինեն վրացերէն։

✦ Քաղաքային դումայի վերջին նիստում յոտընկայս յարգել է Խաչկարեանի յիշատակը։

✦ Պարզել է, որ քաղ. իրաւասուներին չի վերաբերուում գիշերուայ ժամը 12-ից յետոյ դուրսը մնալու ընդհանուր նահանգապետի հրամանը։

✦ Վրաստանի զինուորական նախարարը կառավարութիւնից խնդրել է 100 000 ռ. Սոչիի մօտ ջրասոյզ եղած «Միխայիլ» նաւը հանելու և վերանորոգելու համար։

✦ Միլիցիապետի օգնականը կազմակերպում է միլիցիոներների վաշտ։

✦ Առևտրական շրջանները Հայաստանի ֆինանսների նախարար Էնֆիաջեանի պատուին բանկետ տուին «Օրիանտ» հիւրանոցում։

✦ Նոյեմբերի 20-ի երեկ. Լերմոնտովսկայա փող., № 15 տանը, Ի. Յակոբեանը սուինով սպանել է Կ. Նստ. Սաֆիեանին։ Յակոբեանը ձերբակալած է։

ԱՑՍՕՐ

Երեկոյեան ժամը 5-ին Լերմոնտովսկի փ. № 12 տանը նշանակուած է Հ. Յ. Դաշնակց. տեղակ. կոմիտէի ժողով։

ՎՐԱՑ ԿԵԱՆՔ

ՑԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ

Վրաց լրագիրներից յատկապէս ազգային-դեմոկրատների երկու ֆրակցիաների օրգաններն էլ—«Սաքարթուելօ»-ն և «Կլդէ» շաբաթաթերթը—շարունակում են մինչև օրս էլ խիստ յարձակողական յօդուածներ տպագրել հայերի և Դաշնակցութեան դէմ։

Յիշեալ շաբաթաթերթն իր ամսիս 17-ի (№ 10) համարի «Հայ-վրացական պայքար» վերնագիրը կրող յօդուածում յայտնում է, ի միջի այլոց, այն կարծիքը, թէ հայերը մասնակցում էին Զեգլիի կամրջի պայթեցման գործին։ Նոյն այդ կարծիքը դրանից մի քանի օր առաջ յայտնել էր նաև «Սաքարթուելօ» լրագիրը (№ 214), աւելացնելով, թէ դաշնակցականները Վրաստանի կառավարութեան դէմ էին գնում խօսքով «Հորիզոն» լրագրում, իսկ գործով—Զեգլիի կամրջի տակ...

Շաբաթաթերթը զարմանք է յայտնում, որ Վրաստանի կառավարութիւնը առաւօտից մինչև ուշ գիշեր տեղի պարլամենտի ազմկալից նիստից յետոյ, նիստից, որի ընթացքում լսուեց «համայն Վրաստանի միացեալ հուժկու ձայնը»՝ բաւականացաւ միայն «Հորիզոն» լրագիրը փակելով։ Դրան,—ասում է լրագիրը,—ռուսերէն լեզուով կասեն «строго розыска мышь».

Այնուհետև, խօսելով իր այն համոզման վրայ, թէ Դաշնակցութիւն կուսակցութիւնը աւելի մեծ պատժի պէտք է արժանանար, «Կլդէ»-ն աւելացնում է.

«Մենք պահանջում էինք պատժել դաշնակցականներին ոչ այն նպատակով, որ դրանով թշնամութիւն առաջացնէինք ազգերի միջև, այլ համոզուած էինք, որ հենց կառավարութեան անհանդիստ մարդկանց դէմ գործադրուած օրինական խստութիւնը կը հանգստացնէր վրաց և հայ ժողովուրդներին, յուզուած մթնոլորտը կը մեղմանար և այլ ևս երկիւղ չէր լինի, ինչպէս հիմա, թէ որևէ տեղ տարերային կերպով կը պայթէ հայ-վրացական կոտորած»։

Իսկ «Սաքարթուելօ»-ն իր ամսիս 19-ի (№ 221) համարում, վերադառնալով «Հորիզոն» լրագրի փակման հարցին, անում է հետևեալ տարօրինակ դատողութիւնները.

«Մեր կառավարութիւնը,—ասում է լրագիրը—երկար տատանումներից յետոյ փակեց «Արևելեան Բիւրօ» օրգան «Հորիզոն» լրագիրը։ Այդ քայլին տրամաբանապէս պէտք է հետևէ նաև միւս քայլը։ Օտարների ձեռքով հրատարակուած լրագիրները մեզաւոր են նաև այն ժամանակ, երբ լաւ բաներ են գրում մեր կառավարութեան մասին։ Նրանք ոչ մի իրաւունք չունին մեր ներքին գործերի մէջ խառնուելու։

Վրաց ժողովուրդը չէ կարող հանդուրժել, որ իր սահմաններում տեղի ունենան թաքցայտ կամ գաղտնի ապստամբութիւններ։ Եւ եթէ մեր այժմեան կառավարութեան անդամներն այն աստիճան թոյլ ջղեր ունեն, որ անընդունակ են պետական դաւաճաններին պատշաճաւոր կերպով պատժելու՝ նրանց կարող են ուրիշ այնպիսի մարդիկ փոխարինել, որոնք՝ պինդ ջղեր եւ pk ուժեղ ոսկեր կունենան»։

—

Ճիշտ է, վերջին տողերը շատ խիստ են ասուած, բայց, տարաբախտաբար, պարզապէս պիտի յայտնենք «Սաքարթուելօ»-ի յարգելի խմբագրութեան, որ նրա սպառնալիքներից